ԿՆՈՋ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԿԶԻՍՏԵՆՑՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԼԻՍ ՄԱՆՐՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

https://doi.org/10.59982/18294359-23.14-kh-09

Սոնա Էդուարդի Հայրապետյան
Հայցորդ
ՀԵՀ, Լեզուների ամբիոն
hayrapetyansona0711@gmail.com

Ամփոփագիր

Սույն հոդվածում ներկայացված են կանադացի գրող Ալիս Մանրոյի ստեղծագործությունների առանձնահատկությունները, որտեղ գրողը անդրադառնում է հասարակության մեջ կնոջ դերի կարևորությանը, նրա հոգեբանական խնդիրներին և էկզիստենցյալ պայքարին: Մանրոն տալիս է յուրատեսակ հանգուցալուծումներ ու այլընտրանքային ելքեր, որոնց միջոցով նրա հերոսներն ու կերպարները կարողանում են պայքարել և կրկին ապրել ժամանակը կորցրած իրենց տիրույթում: Նրա հերոսները դժվարությամբ են խառնվում և ադապտացվում ներկային, քանի որ անցյալն է նստած նրանց հոգում և գիտակցության ծալքերում: Մանրոյի պատմվածքները պարզաբանում և ցույց են տալիս մարդկային զգացողությունների բարդություններն ու դրանց արտահայտումը տարբեր հասարակություններում և գիտակցական մակարդակներում: Այդ իսկ պատճառով էլ Մանրոն երբևէ չի կորցնում իր ակտուալությունն ու նրան շարունակում են կարդալ տարբեր տարիքներում: Ալիս Մանրոյի պատմվածքների առանցքում կինն է, նրա ներաշխարհը, ապրումները և հոգու ազատության համար մղված պայքարը: Հեղինակի ստեղծագործությունները առանձնանում են իրենց խորը հոգեբանական խնդիրներով, անհատի բարդ ներաշխարհի բացահայտումներով, մարդու հոգեկերտվածքի ուսումնասիրություններով: Մանրոն իր ստեղծագործություններում շեշտը դնում է հոգեբանական ասպեկտին, որտեղ դիտարկվում են կնոջ հոգեկան ներաշխարհն ու նրա ապրումները: Նա մանրակրկիտ կերպով փորձում է նկարագրել կնոջ յուրաքանչյուր արարք և զգացողություն: Հենց վերը նշված խնդիրներն է փորձում վերհանել հեղինակը՝ տալով դրանց անսպասելի ու աներևակայելի լուծումներ:

Հիմնաբառեր. Ալիս Մանրո, հոգեկան և ֆիզիկական հարմոնիա, էկզիստենցիայի ազատություն, անհատի զարգացում, ֆեմինիստական հայեցակարգ, հոգևոր արժեքներ:

Ներածություն

Քսաներորդ դարում գրականությունը մարդուն տվեց ոչ միայն գեղագիտական ընթերցում և հետաքրքիր պատմությունների ընկալում, այլ այն մարդու առջև բացեց մեկ այլ լայն հորիզոն՝ հոգեբանական տարրերով լեցուն: Ընթերցողները սկսեցին գրական տեքստերը բացել և բացահայտել առանց որևէ արգելքների և վախերի: Հեղինակները կարողացան արտահայտել այն ամենն, ինչ զգում և ապրում էին թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան և թե՛ հոգեբանական ասպեկտներում:

Հենց քսաներորդ դարի սկզբներին կանադական գրականության զարգացումը պայ-

մանավորված էր այն հանգամանքով, որ առավելապես մեծացան մարդկության դեմ ծառացած խնդիրներն ու տեղի ունեցան մի շարք պատերազմներ, աղետալի երևույթներ և ոչ մարդկային վերաբերմունքի դրսևորումներ: Այս ամենն առաջացրեց մի շարք հոգեկան և հոգեբանական խնդիրներ, որոնք էլ դարձան շատ ու շատ ստեղծագործությունների ուսումնասիրությունների թեմաներ:

Եթե տասնիններորդ դարի ռոմանտիկական կոնցեպցիան հնարավորություն էր տալիս կանադացի հեղինակներին պատկերել իրական աշխարհը իր իդեալական ընկալումներով, միմյանց հակադրել իրական և անիրական աշխարհները, ստեղծագործություններում ներմուծել բարու և չարի խնդիրները, մահվան և կյանքի գաղափարները և այլն, ապա քսաներորդ դարի վերջերին այդ գաղափարներն ու կոնցեպցիան ընդլայնվում է և վերաճում բազմաթիվ անկայուն աշխարհների բազմազանության, որոնց պատկերման ընթացքում հեղինակները խաղում են իրական կյանքում ապրող իրենց հերոսների ճակատագրերի հետ և կիրառում մասնատվածության, իրողության շրջման և ոճականացման հատկանիշներով: Այս առումով բավականին հետաքրքիր և յուրօրինակ հեղինակ է կանադացի գրող Ալիս Մանրոն, ով իր ստեղծագործություններում կիրառում է անհատի զարգացման և գիտակցական մակարդակի ընդլայնման խնդիրները հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ առանց անդրադառնալու պատերազմական կամ աղետի թեմաների: Նրա պատմվածքներում հերոսների աշխարհները պատկերվում են իրենց չարչարանքների և սոցիալական խնդիրների ետնապատկերներին, որտեղ իրական աշխարհը զուգակցվում է իրենց ենթագիտակցական և հիշողության մակարդակներին, սակայն վերջինս, ի տարբերություն իրական աշխարհի, ունի որոշակի ժամանակային սահմաններ, որն էլ անընդհատ արտահայտվում է նրա պատմություններում:

«Նրան հավատում ես այն աստիճան, որ կարող է քեզ պատմել անդրշիրիմյան կյանքի մասին առաջին դեմքով, և դու մի վայրկյան չես զարմանա այդ նկարագրության վրա: Նրա աշխատությունները ապացուցն են այն բանի, որ Ալիս Մանրոն դարձել է մարդկության հոգու գիտակներից մեկն աշխարհում» [Munro, 5]: Ահա թե ինչպես է բնութագրվում կանադացի գրող Ալիս Մանրոյի ստեղծագործական աշխարհը ամերիկյան «Նյուսդեյ» ամսագրում:

Ալիս Մանրոն ժամանակակից կանադացի պատմվածքագիր է, ով նաև 2013 թվականին արժանացել է Նոբելյան մրցանակի՝ ժամանակակից պատմվածքների վարպետության համար: Նա առաջին կանադացի գրողն է, ինչպես նաև 13-րդ կին հեղինակը, ով արժանացել է Նոբելյան մրցանակի: Նրա ստեղծագործությունները բնութագրվում են որպես հեղաշրջված կառուցվածքայնություն ունեցող պատմվածքներ, որոնցում խախտված են ժամանակի բնականոն ընթացակարգը: Նրա ստեղծագործություններն առավել պատմում են, քան հայտարարում և առավել բացահայտում են, քան ցուցադրում: Նրա պատմվածքները պարզաբանում և ցույց են տալիս մարդկային զգացողությունների բարդություններն ու դրանց արտահայտումը տարբեր հասարակություններում և գիտակցական մակարդակներում:

Մանրոն հաճախ օգնության է դիմում բնությանն ու կենդանական աշխարհին՝ վերծանելու մարդու հոգեկան ներաշխարհն ու զգացողությունները:

Քսաներորդ դարում կանայք արդեն փորձում էին իրենց ճիշտ տեղն ու դերը գտնել հասարակության մեջ, ոմանք չվախենալով ան-

գամ խարազանումից: Հեղինակի ֆեմինիստական գաղափարները արտահայտված են զուտ ներկայացնելու կնոջը՝ որպես անհատի, առանձին ինքնության և արժանապատվության տեր անձի, ով նույնպես կարող է լինել խելացի, հաջողակ, վստահ և ինքնուրույն: Այստեղ հեղինակն ընդգծում է մարդկանց՝ միմյանց հանդեպ պատասխանատվության գաղափարը:

Քանի որ 20-րդ դարի մշակութային գործիչներից շատերի նպատակը բնությանն ու բնականին անցում կատարելն էր, նրանք սկսեցին օգտվել ոչ միայն պատմական արքետիպերից, այլ սկսեցին նաև օգտագործել մարդու գիտակցականում և ենթագիտակցականում առկա բոլոր տեղեկատվությունները, որոնք էլ իրենց հերթին առաջ են գալիս հիշողության միջոցով: Գիտակցականի և ենթագիտակցականի, դինամիկայի ու կառույցի հոգեբանական համընդհանուր պատկերների, որոնք մեզ են հասնում նախնական ժամանակներից, նկարագրության հիմնարար տեսության հիմնադիրը Կարլ Գուստավ Յունգն է: Բոլոր այն հոգեբանական նախնական կերպարները, որոնք հենց գոյությամբ պարտական են ժառանգությանը, Յունգն անվանում էր հավաքական անգիտակցականի արքետիպեր: Ինչպես նշում է տեսության հիմնադիրը՝ «մեր գիտակցության հիմքում ընկած են հոգեբանական բազմաթիվ երևույթներ, ինչպես մեր մարմնի կառուցվածքն է ծագում կաթնասունների անատոմիական ընդհանուր կառույցից»: [Jung, 88] Այլ կերպ ասած՝ մեր անգիտակցական մակարդակում գոյություն ունի որոշակի հոգեբանական ոլորտ, որն իր մեջ կրում է ամբողջ մարդկության ժառանգական և պատմական հատկությունները:

Ըստ Յունգի՝ հոգեկան համակարգը միշտ ակտիվորեն հավասարակշռվածություն է որոնում հակազդող և փոխադարձ կապ ունեցող գործոնների միջև:

Յունգի գաղափարները հոգեկան էներգիայի վերաբերյալ զարմանալիորեն կանխատեսում են ստրուկտուրալիզմը և տեղեկատվական տեսությունը: Նրա կարծիքով հոգեկան էներգիայի ուղղվածությունը դեպի գիտակցություն առաջնային է, մինչդեռ այն դառնում է ետընթացային այն դեպքում, երբ հոգեկան էներգիան ուղղված է դեպի ենթագիտակցություն: Ենթագիտակցականի և գիտակցականի հետ անընդհատ պայքարի մեջ են մտնում Ալիս Մանրոյի հերոսներն ու կերպարները, որոնք ձգտում են ապրել ներկայում՝ չկտրելով իրենցից հիշողության թելը: Նրանք անընդհատ գտնվում են հիշողության պարունակում և չեն կարողանում իրենց քայլերը անել առանց անցյալի գործողությունների: Այս հերոսները մշտապես գտնվում են էկզիստենցիալ պայքարի մեջ իրենց շրջապատող աշխարհի և առհասարակ բոլոր երևույթների հետ: Էկզիստենցիան բնութագրվում է որպես վերջավոր, պատմական և իրադրային գոյություն: Մարդու պատմականությունը դրսևորվում է այն բանում, որ նա «նետված է որոշակի իրադրության մեջ և գիտակցում է իր մահկանացու, վերջավոր լինելը: Աշխարհում մարդը միակն է, որին բնորոշ է ժամանակի և կեցության մասին մտածելը: Հայդեգերը մարդկային գոյությունը դիտարկում է ժամանակային կառուցվածքի տեսանկյունից և դա անվանում է «հոգս»: «Հոգսը»՝ որպես մտահոգված կեցության միասնական կառուցվածք, բաղկացած է երեք պահից՝ ա) «աշխարհում կեցություն կամ անցյալ ժամանակ, որը Հայդեգերը բնորոշում է որպես լքվածություն: Էկզիստենցիան հայտնվում է մի աշխարհում, որը արդեն կառուցված է ուրիշների կողմից: բ) ժամանակից առաջ անցնելը կամ ապագան, որը բնորոշվում է որպես «նախագիծ»: Մարդը մշտապես «փախչում է ինքն իրենից, հաղթահարում ինքն իրեն կամ իրեն նախագծում: գ) Գոյություն ունեցողին առըն-

թեր կեցություն կամ ներկա, որը Հայդեգերը բնորոշում է որպես «դատապարտվածություն» իրերին [Marino, Gordon, 13]:

Մանրոյի պատմվածքներում արծարծվում են երկու սուրբ անմահություններ. հեղինակն անդրադառնում է իր ընտանիքին, ծնողներին, ընկերներին և իր հայրենի Օնտարիոյի բնակիչներին: Վերջին կերպարներին նա առավել շեշտադրված է նկարագրում, քանի որ միայն հայրենի բնության հետ կապը կարող է շարունակել մարդկային ցեղի և հոգու անընդհատությունը: Եվ այս ամենի հետ մեկտեղ հիշողության գաղափարն ու կորստի գաղափարը բարձրանում են ավելի վեր, քանի որ հեղինակը հիշողության միջոցով վերակենդանացնում է իր ծնողներին, իր ընկերներին, որոնց շնորհիվ ճաշակել էր նաև կորստի անդառնալի հետևանքները: Պատմվածքների այս ժողովածուն իրենից ներկայացնում է մարդկության փնտրտուք՝ անցյալից դեպի ներկա գիտակցական հոսքի միջոցով: Մանրոն իր ազատության շնորհիվ ցանկանում է գտնել իրեն հարազատ հոգիներին, ընկերներին և բարեկամներին: Այս փնտրտուքը կարելի է և բացատրել նրանով, որ հեղինակը զգում է մարդկային կյանքի կարճատևությունը, այդ իսկ պատճառով նա անընդհատ ցանկանում է վերադառնալ այնտեղ, որտեղից սկսվել էր իր սկիզբը՝ բեղմնավորում և մանկություն: Մանրոյի պատմվածքների հերոսները ինչ որ հիվանդությունների կրողն են, ովքեր շուտով հեռանալու են կյանքից, և հենց այդ պատճառով էլ նրանք գիտակցում են ապրելու գինը՝ անցյալը կապելով ներկայի հետ:

Հեղինակի գրեթե բոլոր պատմվածքների հիմքը մարդու հոգեբանական էության ուսումնասիրությունն է, քանի որ Մանրոն առաջնահերթ գնահատում է զգացմունքային ճշմարտացիությունը, այն հոգեվիճակները, իրավիճակներն ու սոցիալական պայմանները, որոնք բխեցնում են մարդկանց վարքն ու գիտակցական դրսևորումը: Այս ստեղծագործություններում նա անպայման խոսում է սիրո և ատելության մասին, ինչպես նաև պատկերում նրանց, ովքեր աշխարհ են բերում այդ երկու երևույթները, որոնք էլ կարողանում են ծնել աշխարհում առկա մյուս երևույթները [Howells, Coral et al., 88]:

Մանրոն երբեմն իր պատմությունները սկսում է աննշան նոտայով, թվացյալ իդեալական կյանքով ապրող հերոսների նկարագրությամբ, սակայն շուտով պարզ է դառնում, որ ամեն բան իդեալական չէ և միգուցե այդ հիասքանչ տանը բնակվում են հոգեպես և ֆիզիկապես ոչ առողջ մարդիկ, ովքեր, չնայած իրենց առջև ծառացած խնդիրներին, այնուամենայնիվ, կարող են ինչ որ բան փոխել: Նա հոգեբանական մանրամասնությամբ և հստակությամբ է ճանաչում խոցելի խմբերին՝ երեխաներին, ծերերին, բաժանված և ոչ սիրված կանանց: Նրա նկարագրություններն ու զգացմունքային արտահայտումներն այնքան պատկերավոր են, որ թվում է, թե այդ ամենը նա հենց ինքն է զգում կամ էլ հենց այդ պահին ընթերցողը: Հենց դա է պատճառը, որ Ալիս Մանրոն գրեթե միշտ առանձնացվում է կանադական գրականության մեջ. «Ոչ ոք չի կարող նկարագրել կանացի սրտի գաղտնիքներն այնպես, ինչպես դա անում է Ալիս Մանրոն, և նա այդ ամենն անում է առանց որևէ չափազանցված զգացմունքայնության, այլ որոշակի պարզությամբ» [Gittings, Christopher, 27]:

Ալիս Մանրոն իր ստեղծագործություններում շեշտը դնում է հոգեբանական ասպեկտին, որտեղ դիտարկվում են կնոջ հոգեկան ներաշխարհն ու նրա ապրումները: Նա մանրակրկիտ կերպով փորձում է նկարագրել կնոջ յուրաքանչյուր արարք և զգացողություն: Քսաներորդ դարում կանայք արդեն փորձում էին իրենց ճիշտ տեղն ու դերը գտնել հասարակության մեջ, ոմանք չվախենալով անգամ

խարազանումից: Հեղինակի ֆեմինիստական գաղափարները արտահայտված են զուտ ներկայացնելու կնոջը՝ որպես անհատի, առանձին ինքնության և արժանապատվության տեր անձի, ով նույնպես կարող է լինել խելացի, հաջողակ, վստահ և ինքնուրույն: Այստեղ հեղինակն ընդգծում է մարդկանց՝ միմյանց հանդեպ պատասխանատվության գաղափարը: Հավանաբար, Մանրոն նաև ջանացել է նկարագրել շատ տղամարդկանց իդեալական աշխարհը, որտեղ իրենք են իշխում և ունեն բացարձակ տնօրինելու իրավունք, իսկ կինն ավաղ պարզապես մի հեզ, խոնարհ ու համաձայնող էակ է: Այս պատմվածքներում հստակ ընդգծվում են, որ կանայք չեն կարող մրցել տղամարդկանց հետ՝ ցույց տալով իրենց բարձր ինտելեկտը: Ըստ հեղինակի սա վախկոտների և թույլերի իդեալական աշխարհ է, որտեղ այդ աշխարհի տիրակալները չեն ընդունում կնոջ ինտելեկտն ու խելամտությունը: Խնդիրը ոչ միայն կանանց մեջ էր, այլ տղամարդկանց, քանի որ նրանց ոչինչ չէր մնում անել, քան ինքնահաստատվել կանանց հաշվին: Ահա հենց այս երևույթներն են, որոնք արտացոլված են Մանրոյի խորը հոգեբանական ստեղծագործություններում:

Մանրոյի «Ատելություն, ընկերություն, սիրատածում, սեր, ամուսնություն» պատմվածքների այս ժողովածուն նրա լավագույն ստեղծագործություններից է, որի յուրաքանչյուր թերթում արտացոլված է հեղինակի՝ առօրյա կյանքը գիտակցությունից դուրս և գիտակցության մեջ ներկայացնելու տաղանդը: Հեղինակն այս գրքում ջանում է ցույց տալ, թե իրականում որքան հետաքրքիր և արտասովոր կարող է լինել իրական կյանքը, եթե մարդիկ կտրվեն իրենց առօրյա հոգսերից և փորձեն տեսնել իրենց շրջապատող բնությունն ու դրանում առկա գեղեցիկ երևույթները, որոնք նրանց կողքին են ամենուր և ամեն ժամ: Նա այդ ամենն անում է իր լեզվական և ոճական յուրահատուկ առանձնահատկությունների միջոցով. Հեղինակն օգտագործում է բավականին շատ փոխաբերություններ, մակդիրներ և համեմատություններ, ինչպես նաև օգտագործում է նամակի գրելաոճը որպես պատմվածքի յուրահատկություն:

«Մանրոն ապրող այն եզակի գրողներից է, ում մասին ես միշտ մտածում եմ և ասում, որ իմ կրոնը գեղարվեստական գրականությունն է: Իմ խորհուրդը, որով էլ հենց ես եմ ուղղորդվում, այն է, որ կարդացեք Մանրոյի ստեղծագործությունները, որքան հնարավոր է, շատ կարդացեք նրան» [Mazur, Carol et al., 15]: Ահա նմանատիպ բառերով է բնութագրում Մանրոյին ամերիկացի վիպասան Ջոնաթան Ֆրենզենը, ով կարծում է, որ Ալիս Մանրոյի ստեղծագործությունները նոր սերնդի համար գիտակցական նորարարություն են համարվում, ում հերոսներն ապրում են սովորական մարդու պես, սակայն հիշում և գոյատևում են անսովոր պայմաններում:

Մանրոյի «Ատելություն, ընկերություն, սիրատածում, սեր, ամուսնություն» պատմվածքների ժողովածուն համարվում է նրա լավագույն աշխատանքներից մեկը, որի յուրաքանչյուր թերթում արտացոլված է հեղինակի՝ առօրյա կյանքը հոգեկան և ֆիզիկական հարմոնիայի մեջ ներկայացնելու տաղանդը: Հեղինակն այս գրքում ջանում է ցույց տալ, թե իրականում որքան հետաքրքիր և արտասովոր կարող է լինել կյանքը, թեկուզ և լի բազմաթիվ խնդիրներով, եթե մարդիկ կտրվեն իրենց առօրյա հոգսերից և փորձեն տեսնել իրենց շրջապատող բնությունը, որը երևի միակ կենդանի և շնչող երևույթն է, որ նրանց կողքին են ամենուր և ամեն ժամ: Նրա բոլոր ստեղծագործություններում միշտ փառաբանվում են բնությունն ու բնական երևույթները, և քննադատվում նյութապաշտ աշխարհը: Հեղինակն իր գրվածքների միջոցով անընդհատ ջանում է հիշեցնել, որ նյութական աշխարհից

զատ առավել կարևոր է մարդու հոգեկան աշխարհը [Steele, Apollonia et al., 44]

Քսաներորդ դարում կործանման եզրին էր հայտնվել անգամ մարդու կենսաբանական էությունը, որն ի սկզբանե կոչված էր արժևորելու կյանքի գույներ հանդիսացող ճշմարիտը, բարին և գեղեցիկը: Դարի հասարակությունը մոռացել էր իր երկդիմի էության այդ մեծարժեք կողմի գոյությունը և տրվել մարդու սոցիալական բնույթի ծնունդ հանդիսացող անբարո քաղաքակրթությանը: Հենց այդ էր պատճառը, որ կարիք եղավ խոսելու և ներկայացնելու բոլոր առկա խնդիրներն ու զգացողությունները, որոնք ցույց կտային իրականության աներկբա խոչընդոտներն ու արհավիրքները, որոնք, ցավոք, տեղի են ունենում հենց մեր աշխարհում:

Հետարդիական ժամանակաշրջանում պատերազմական սարսափներ տեսած հասարակության համար անհրաժեշտ էին ոգևորվածության, չարի նկատմամբ բարու հաղթանակի վերարժևորման, գիտատեխնիկական նվաճումներին համարժեք նոր մոտեցումներ, որոնք էլ նպաստեցին կանադական գրականության զարգացմանն ու համաշխարհային գրականության մեջ հստակ դեր ունենալուն:

Գրեթե իր բոլոր պատմվածքներում Մանրոն չի հետևում ժամանակային կոնկրետ կարգուկանոնին, նա ինքն է որոշում ժամանակի ընթացքն ու միախառնում է անցյալն ու ներկան:

Ալիս Մանրոյի պատմվածքների գործողությունները հիմնականում տեղի են ունենում իր հայրենի Օնտարիոյում: Գրեթե բոլոր պատմվածքներում զգալիորեն նկատելի է հեղինակի կրոնական սևեռվածությունը: Շատ գրաքննադատներ համեմատում են Մանրոյի պատմվածքները հարավ-ամերիկյան գրողներ Ֆոլքների և Ֆլեների Օ՛ Քոնների ստեղծագործությունների հետ, քանի որ նրանց աշխատանքներում նույնպես տեսանելի են հայրենի բնության պատկերները, ինչպես նաև տեղի խորը արմատավորված ավանդույթներն ու սովորույթները: Սակայն ի տարբերություն վերոնշյալ հեղինակների, Մանրոյի հերոսները մի փոքր ամուր չեն կառչած իրենց հայրենիքին, և փորձում են ընդդիմանալ տեղի վարքերին ու բարքերին: Նրա տղամարդ կերպարները ներկայացնում են սովորական տղամարդու նկարագիր, սակայն կանացի հերոսները առավել բարդ են և ոչ շուտ հասկանալի:

Մանրոյի ստեղծագործությունները հիշեցնում են Հարավային Օնտարիոյի Գոթական գրական ժանրը:

Ալիս Մանրոն յուրահատուկ գեղեցկությամբ է ներկայացնում բնության պատկերները, որոնք իր կերտած հետաքրքիր կերպարների հետ ստեղծում են հիասքանչ պատկերավորում, որը հասկանալու համար ոչ թե միայն կարդալ է պետք, այլ ունկնդրել և պատկերացնել: Նրա պատմվածքներում զարմանալի կենսունակ են բոլոր հերոսներն ու երևույթները: Մանրոն երբեմն իր պատմությունները սկսում է աննշան նոտայով, թվացյալ իդեալական կյանքով ապրող հերոսների նկարագրությամբ, սակայն շուտով պարզ է դառնում, որ ամեն բան իդեալական չէ և միգուցե այդ հիասքանչ տանը ապրում են խնդրահարույց մարդիկ, ովքեր ամեն պահ կռիվ են տալիս իրենց գոյության համար: Նմանատիպ օրինակ կարող է համարվել «Շրջանակաձև տունը» ստեղծագործությունը, որտեղ արտաքինից տունը գեղեցիկ է, ամեն բան հիասքանչ ձևով դասավորված, բայց արի ու տես, որ այդ տանն ապրող ընտանիքը սառն ու օտար է մեկը մյուսի հանդեպ: Ամուսինները իրարից օտարացած են, անգամ ամեն մեկը մտածում է իր երիտասարդ տարիների սիրո մասին: Պետք է նշել, որ անգամ վերնագիրը՝ «Շրջանակաձև տունը», Մանրո-

յի կողմից օգտագործված փոխաբերություն է, քանի որ շրջանակածև տան մեջ ապրող ընտանիքը չի կարող դուրս գալ այդ սառնության և օտարության շրջանակից: Նմանատիպ տունը չի կարող ամուր և հաստատուն լինել, ինչպես հենց դրանում ապրող հերոսների փոխհարաբերություններն ու զգացմունքները:

Մանրոյի ստեղծագործություններում կենտրոնական տեղ է գրավում անհատի և հասարակության հարաբերակցության և էկզիստենցիայի ազատության հարցը: Էկզիստենցիալիզմն անհատապաշտական և սուբյեկտիվիստական փիլիսոփայություն է, որում անհատը ըմբռնվում է որպես ինքնաբավ ու բարձրագույն կեցություն: Անհատն ինքնանպատակ է, իսկ հասարակությունը՝ միջոց: Տեսականորեն հասարակությունը կոչված է ապահովելու անհատի ազատ զարգացումը, նրա իրավունքները, սակայն, իրականում հասարակությունը բացասական դեր է խաղում անհատի կյանքում՝ ճնշում է նրան, սահմանափակում նրա ազատությունը և դիմազրկում: Ժամանակակից հասարակությունն այնպիսին է, որ մարդը օտարվում է ինքն իրենից, հանդես գալիս որպես «միջինացված» երևույթ: Էկզիստենցիալիզմը ելնում է այն մտքից, որ մարդը ապրում է հասարակության մեջ, ուրիշ մարդկանց հետ, որ միայն ուրիշների հետ հաղորդակցվելիս է մարդը դառնում մարդ: Անդրադառնալով մարդկային հաղորդակցման խնդրին և մարդկանց փոխհարաբերություններին՝ Մանրոն նշում է, որ իսկական հաղորդակցությունը հնարավոր է ոչ միայն Աստծո, այլ նաև ուրիշ մարդկանց հետ: Եվ հենց այս փոխհարաբերության մեջ կարևոր դեր է զբաղեցնում հիշողությունը՝ առանց որի անհնար է պատկերացնել մարդու գոյությունը: Միայն էկզիստենցիալ հաղորդակցության ժամանակ է մարդը բացահայտում իր իսկական կեցությունը: Ի տարբերություն հասարակական հաղորդակցության, որի ժամանակ մարդը հանդես է գալիս որպես որևէ հանրության (ընտանիք, ազգ, պետություն) մասնիկ և մարդկանց միջև հաստատվում են արտաքին կապեր, էկզիստենցիալ հաղորդակցության ժամանակ մարդիկ իրար հետ հաղորդակցվում են որպես անկրկնելի անհատներ:

Մանրոն իր պատմվածքների ժողովածուի ընթացքում փորձում է ցույց տալ, որ մինչև մարդը չկորչի, նա հիշողությամբ չի վերածնվի: Իսկ ամեն անգամ վերածնվելիս՝ մեծանում է նորից նրա կորստի հավանականությունը: Եվ որպեսզի մարդը չկորչի, նա պետք է ունենա հնարավորինս ամուր արմատներ և պատմություն: Այդ է պատճառը, որ կորստի վախն իրենց սրտերում՝ Մոնրոյի կերտած կերպարները անընդհատ անդրադառնում են իրենց երեկվա օրվան՝ հիշելով, թե ինչպիսինն էին անցյալում, և ինչպիսինն են ներկայում:

Չնայած Մանրոյի հերոսները անընդհատ անդրադարձ են կատարում դեպի անցյալ, այնուամենայնիվ նա չի ցանկանում այնտեղ մնալ: «Ատելություն, ընկերություն, սիրատածում, սեր, ամուսնություն» պատմվածքների ժողովածուն որքան որ ամուր կապված է անցյալի հիշողությունների և կորստի գաղափարներին, այնքան էլ ամուր կառչած են ներկային: Այս բոլոր պատմվածքները անցյալից վերադարձ են կատարում դեպի ներկա և ի վերջո անգամ ակնարկ կատարում դեպի ապագան [Finlay, Sprague, 363]:

Հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ Մանրոն ստեղծագործում է դեռևս կես դար, նրան հաջողվել է համեմատվել մի շարք համաշխարհային ճանաչում գտած գրողների հետ, ինչպես օրինակ ռուս հայտնի գրող Չեխովի հետ: Նրա պատմվածքները նույնպես չեխովյան փոքրիկ պատահարներ են, որտեղ բովանդակությունը մղվում է երկրորդ պլան,

իսկ առաջնային է դառնում մարդու ներքին խնդիրներն իր և իր շրջապատի հետ: Ահա թե ինչպես է բնութագրում ամերիկացի գրաքննադատ Գարան Հոլկոմբը Չեխովի և Մանրոյի ստեղծագործական ընդհանրությունը.
«Նրանց ստեղծագործություններում ամեն բան հիմնված է էպիֆանիկ՝ աստվածահայտնության պահի վրա: Հանկարծ մի պահ ամեն բան լուսավորվում է՝ նուրբ, հասկանալի և բացահայտվող մանրամասնությունների շնորհիվ»: Ալիս Մանրոյի պատմվածքները սիրո և աշխատանքի ձախողման լուսաբանումն են կատարում: Նա կիսում է Չեխովի ճնշվածությունը ժամանակի հանդեպ, և այդ իսկ պատճառով էլ, չհարմարվելով ժամանակի բնականոն ընթացքի և թելադրող ուժի հետ, հեղինակները փորձում են խաղալ ժամանակի հետ՝ հարմարեցնելով իրենց գիտակցության հոսքին:

Մանրոյի պատմվածքների հերոսները կորցրել են ժամանակի զգացողությունը, չնայած որ հիշում են, որ իրենք ներկայում են, բայց նաև ապրում են անցյալում. անգամ փորձում են չհետևել ժամանակին: Ամեն կերպար և ամեն վայր իր ժամանակն ունի. մեկի համար ժամանակը մեռած է, մյուսի համար այն շատ արագ է սլանում: Սակայն ֆիքսված ժամանակահատված որպես այդպիսին նրանց համար գոյություն չունի, քանի որ նրանք անվերջ հնի և նորի միախառնման փնտրտուքի մեջ են գտնվում:

Այստեղ ամեն մի կերպար ինքն է իր ժամանակի տիրակալը: Ինքն է որոշում ինչը ինչից հետո կատարել, որտեղ գնալ և ինչպես իրեն պահել: Մանրոյի «Ատելություն, ընկերություն, սիրատածում, սեր, ամուսնություն» պատմվածքների կերպարները բավականին վառ արտահայտված անձնավորություններ են՝ կայտառ ու գրավիչ աղջնակներ, ովքեր շատ յուրօրինակ կերպով խաղում են մարդկային ճակատագրերի և զգացմունքների հետ, հասուն ու խելացի կանայք, ովքեր փորձում են հաղթահարել անբուժելի հիվանդությունները, ընտանիքին նվիրված կանայք, ովքեր փորձում են ամենօրյա կռիվ տալ իրենց առջև ծառացած սոցիալական խնդիրների հետ: Հատկանշական է այն փաստը, որ Մանրոյի բոլոր ստեղծագործություններում տղամարդիկ զբաղեցնում են զուտ երկրորդական դերերը, քանի որ արդեն Մանրոն փորձում է բացահայտել քսաներորդ դարի ուժեղ և պայքարող, տղամարդուն հավասար և անգամ առավել կնոջ կողմերը [Howells, Coral et al., 112]:

Ալիս Մանրոն իր պատմվածքներում անդրադառնում է մարդկային կեցության էական խնդիրներին: Հեղինակն անդադար ջանում է ցույց տալ, որ կյանքն իրականում ավելի բարդ է ու խորը, իսկ մարդկային հոգին՝ առավել դժվար վերծանելի: Ալիս Մանրոյի պարագայում էլ կատարվել է այն, ինչ տեղի է ունենում մեծ գրողների հետ. արվեստագետն ու մտածողը միախառնվում են միմյանց՝ հեղինակի համար դառնալով անբաժանելի: Այս երկու վեհ կերպարները ամփոփված են Մանրոյի մեջ, որոնք գործում են միասին՝ առաջադրելով կյանքի փաստերից ընդհանրացված թեզը կամ, ավելի ընդգրկուն գաղափարը [Mccaig, Jo et al., 87]:

Մանրոյի ստեղծագործական դաշտն առավելապես վերագրվում է էլեգիային, քանի որ այն հարուստ է առավել մարդկային կյանքի ընթացքում հանդիպող կորուստների, տառապանքների և վշտերի նկարագրությամբ, քան որևէ ուրախալի իրադարձության նկարագրությամբ: Նա էլեգիայի մեջ զետեղում է ոչ միայն մարդու հոգեկան տառապանքը, այլ նաև անձի հոգեկան տառապանքը, որը մարդուն ուժասպառ է անում, ինչն էլ կարող է հանգեցնել նաև հոգու և զգայականի թուլացման: Ինչևէ, կյանքի դժվարություններում կոփված հերոսների և կերպարների կողքին,

Ալիս Մանրոն նաև առաջ է քաշում պատանեկան խինդ ու ծիծաղով լեցուն աղջնակներին, ովքեր իրենց կենսուրախությունը փորձում են մտցնել մեծահասակների կյանք՝ ազդելով նրանց ճակատագրերի վրա:

Անցյալին անդրադառնալը բնորոշ է Մանրոյի ստեղծած գրականությանը, քանի որ նրա հերոսների և կերպարների անցյալում կան ճեղքեր, որոնք երբևէ չեն կարող անհետանալ նրանց գենի և արյան միջից: Անցյալի մասին խոսելն ինչ որ չափով անդրադառնալն է իրենց ինքնությանը, իրենց ավելի խորը արմատներին: Ինչպես նաև հիշելով անցյալը, նրանք վկայակոչում են իրենց ժամանակն ու դրա հաղթանակը մարդկության հանդեպ: Մանրոն իր պատմվածքներում չի կանոնակարգում ժամանակն ու կյանքի բնականոն ընթացքը՝ ցանկանալով ցույց տալ ժամանակի ներգործությունը մարդու ներաշխարհի վրա, ինչպես նաև գիտակցության հոսքի և հիշողության դրսևորումը՝ որպես պայքարի մի մեծ միջոց:

Եզրակացություն

Վերլուծելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ Ալիս Մանրոյի պարագայում կանացի կերպարները ներկայացվում են ոչ թե զոհեր, ովքեր անցնում են որոշակի դժվարությունների և խոչընդոտների ճանապարհով, այլ նրանք պատկերված են որպես անձինք, ովքեր կարողանում են հաղթահարել բոլոր բարդություններն ու հպարտորեն առաջ են շարժվում: Զոհի կարգավիճակը պատվաբեր չէ ֆեմինիստական հայեցակարգերից, այդ իսկ պատճառով էլ հեղինակը ջանում է հնարավորինս բարձր և վեհ ներկայացնել կնոջ այն գոյությունը, որը դեռևս մինչև 20-րդ դարը պարփակված էր, ներամփոփված և չուներ որոշակի արժեքների բարձրաձայնում: Հետևաբար, Ալիս Մանրոն կանադական գրականության համածիրում դարձավ կանացի այն բարձր ձայնը, որը առաջ էր քաշում կանացի բոլոր տառապանքներն ու զգացողությունները ոչ թե որպես նրանց թուլացնող, այլ որպես՝ ուժեղացնող և ինքնակերտող միջոց:

Գրականության ցանկ

1. Alice Munro "Hateship, Friendship, Courtship, Loveship, Marriage", USA, 2014
2. W.H. New, Literature in English, 2 December 2012, last edited 16 December 2013.
3. Jung C.G. «Man and his symbols» 1964
4. Marino, Gordon (ed.) Basic Writings of Existentialism. New York: Modern Library,2004
5. Howells, Coral, Ann. (1987). Private and Fictional Words: Canadian Women Novelists of the 1970s and 1980s. London: Methuen & Co. Ltd
6. Gittings, Christopher E.. "Constructing a Scots-Canadian Ground: Family history and cultural translation in Alice Munro." *Studies in Short Fiction* 34.1 (Winter 1997)
7. Mazur, Carol and Moulder, Cathy. Alice Munro: An Annotated Bibliography of Works and Criticism. (Toronto: Scarecrow Press, 2007
8. Steele, Apollonia and Tener, Jean F., editors. *The Alice Munro Papers: Second Accession.* (Calgary: University of Calgary Press, 1987)
9. Finlay, J. L. & D. N. Sprague. (1984). The Structure of Canadian History. Ontario: Prentice-Hall Canada Inc.
10. Mccaig, Jo, Ann. (2002). Reading in: Alice Munro’s Archives. Toronto: Wilfrid Laurier University Press, (chapter 5).

WOMAN'S PSYCHOLOGICAL AND EXISTENCE ISSUES IN ALICE MUNRO'S WORKS

Sona Hayrapetyan
Researcher
EUA, Chair of Languages
hayrapetyansona0711@gmail.com

Abstract

The article touches upon the Canadian writer Alice Munro's story features, where the author refers to the importance of the women's role in the society, their psychological problems and ontological struggle. Munro gives unique solutions and alternative outputs through which her heroes and characters are able to cope with difficulties and live in their time-lost domain. Her characters have difficulty in blending in and adapting to the present as the past dominates in their spirit and folds of consciousness. Munro's works clarify and demonstrate the complexities of human feelings and their expression in different societies and levels of consciousness. This is the reason why Munro never loses her relevance and her works are read at different ages. The centre of Alice Munro's stories is the woman with her inner world, her feelings and the struggle for her spiritual freedom. The author's works are distinguished by their deep psychological problems, revelations of the complex inner world of an individual, studies of the human psyche. In her works Munro emphasizes the psychological aspect, where the woman's mental inner world and feelings are observed. She thoroughly tries to describe every action and feeling of a woman. The author tries to bring up the very above-mentioned issues giving them unexpected and unimaginable solutions.

Keywords*:* Alice Munro, spiritual and physical harmony, freedom of existence, individual development, feminist concept, spiritual values.

Ներկայացվել է՝ 20.03.2023թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 20.04.2023թ.